

**1. Տեսլական.** *Ո՞րը կլինի Ձեր՝ որպես Վրաստանի նախագահի ամենամեծ նպատակը:*

Երկրի միավորում և Ռուսաստանի հետ եղբայրության, բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների վերականգնում: Ընդհանուր կյանք և աշխատանք կազմակերպող արդարացի օրինակելի հասարակական և քաղաքական կյանքի վերականգնում:

**2. Կրթություն.** *Ո՞րն է կրթական քաղաքականության Ձեր տեսլականը: Ինչպիսի՞ քաղաքականություն էք առաջարկում տարրական, միջնակարգ, մասնագիտական և բարձրագույն կրթության որակը բարելավելու համար:*

Վերևում թվարկած կրթական փուլերը իրենց տեղն ունեն մեր երկրի կրթության ճանապարհին: Գլխավորն այն է, որ այն պետք է լինի անվճար և բոլորին մատչելի: Չենք բացառում նաև մասնավոր կրթական ցանցերի գոյությունը:

**3. Հարկեր.** *Ձեր կարծիքով ինչպիսի՞ հարկային համակարգ պետք է ունենա Վրաստանը և ո՞ր սկզբունքների հիման վրա պետք է սահմանվի եկամտահարկը:*

Սոցիալ-ժողովրդավարական Կանոնադրության լրիվ պաշտպանությամբ պետք է տեղի ունենա ժամանակին համապատասխան եկամուտների վճարումը:

**4. Տնտեսություն.** *Ո՞րն է տնտեսական աճը խթանելու Ձեր տեսլականը: Հատկապես ո՞ր ոլորտներն են Ձեզ համար առաջնային և ինչպիսի՞ քաղաքականություն Դուք կառաջարկեիք Վրաստանի խորհրդարանին և կառավարությանը:*

Առաջին հերթին ազրո-արդյունաբերական համալիրի վերածնունդ:

**5. Աշխատանք.** *Ինչպիսի՞ քաղաքականություն պետք է իրականացնի կառավարությունը գործազրկության հաղթահարման ուղղությամբ:*

Սեփական կարողությունների լրիվ գործարկում:

**6. Առողջապահություն.** *Ինչպիսի քաղաքականություն կվարեիք՝ ավելացնելու առողջապահության հասանելիությունն ու որակը:*

Անվճար բժշկական սպասարկում, մասնավոր սեկտորի գոյության հետ միասին (շվեդական մոդել):

**7. Սոցիալական անվտանգություն.** *Ինչպիսի՞ քաղաքականություն էք նախատեսում սոցիալական անվտանգության բերալավման ուղղությամբ:*

Սոցիալական անվտանգությունը ապահովում ենք առողջապահության որակի բարձրացմամբ, կենսաթոշակային հարցերի համար ապրուստի նվազագույն զամբյուղը մինչև իրատեսությունը բարձացնելով, շվեդական մոդելի հաշվառման հիման վրա:

**8. Տեղական ինքնակառավարում.** *Ձեր կարծիքով ինչպե՞ս պետք է Վրաստանում կազմակերպվի տեղական ինքնակառավարումը:*

Պետությունը պետք է կարգավորի միջամտությունը տեղական ինքնակառավարմանը մինչև այն դոզան, որպեսզի ապահովի նրանց շահերի պաշտպանությունը գյուղատնտեսական կամ արդյունաբերական սեկտորում, հարկ եղած դեպքում նաև տնտեսական խրախուսանք:

**9. Տարածքային ամբողջականություն.** *Ինչպիսի՞ քաղաքականություն կվարեիք երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու եւ ժողովուրդների միջև վստահություն կառուցելու ուղղությամբ:*

Ազգությունների միջև պատմական անցյալի հաշվառումով, առաջին հերթին Ռուսաստանի հետ, հին հարաբերությունների կարգավորել և այլ հարևանների հետ միասին շարունակել պատմականորեն բարեկամական կյանքը:

**10. Սեռական փոքրամասնությունների իրավունքներ.** *Ո՞րն է Ձեր մտտեցումը սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ հասարակական-քաղաքական կյանքում նրանց ավելի լավ ինտեգրման խնդրի վերաբերյալ:*

Վրաստանում սեռական փոքրամասնությունների իրավունքները պատմականորեն երբեք չեն խախտվել, ոչ էլ հիմա են խախտվում և մեր ազգի հանդուրժողականությունից էլնելով ոչ էլ կխախտվեն: Դա միշտ եղել է անձնական գաղտնիքի գուսպ արտահայտություն: Գովազդում և շքերթների կազմակերպումը օժանդակում են օտարացմանը, ինչը բարոյապես նույնպես անթուլատրելի է:

**11. Կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին.** *Խնդրում ենք նկարագրել քաղաքական կյանքին կանանց մասնակցությունն ավելացնելու վերաբերյալ Ձեր մտտեցումները (առկայության դեպքում):*

Կյանքը ցույց տվեց, որ կանայք քաղաքականությունում և ոչ միայն քաղաքականությունում նպատակաուղղված են: Փոխզիջումների դժվար քաղաքականությունում նպատակաուղղված են, փոխզիջումների դժվարությամբ դիմողներ, օրենքները անթերի կատարողներ և կյանքում ներդրողներ, այդ պատճառով նրանք պետք է զբաղեցնեն պատշաճ տեղեր:

**12. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ.** *Ինչպիսի՞ քաղաքականություն կիրականացնեիք՝ ապահովելու ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը և ինտեգրումը Վրաստանի սոցիալ-քաղաքական կյանքին:*

Ամեն կողմից պաշտպանված պետք է լինեն ազգային փոքրամասնությունների իրավունքները և նրանք չպետք է զգան լեզվական կամ մշակութային խտրականություն: Ընտրված պետք է լինեն տեղական և կենտրոնական իշխանությունում:

**13. Շրջակա միջավայրի պաշտպանություն/բնապահպանություն.** *Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկները (առկայության դեպքում) առողջ և անվտանգ շրջակա միջավայր ստեղծելու վերաբերյալ:*

Անտառանյութի ոչարդարացի հատմանը, հիդրոէլեկտրակայանների շինարարությանը զգույշ մոտեցում, անտառանյութի պահպանում և արհեստականորեն դրանց ստեղծում: Համարում ենք պետության գերակայությունը դրանք սեփականությունում վերադաձնելու համար:

**14. Ռազմավարական գործընկերություն.** *Ո՞ր երկրի և կամ երկրների դաշինքի հետ Դուք կփորձեք հաստատել ռազմավարական, այդ թվում՝ ռազմական-ռազմավարական գործընկերություն: Ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեք այդ ուղղությամբ:*

Ինչպես պատմականորեն երևում է և արտահայտվեց՝ որպես միակ ճանապարհ մնում է եվրո-ասիական դաշինքին մասնակցությունը և նրանց հետ միասին եվրոպական, ասիական կամ աշխարհի բոլոր դաշինքների հետ բարեկամական հարաբերությունը տնտեսական կամ ընդհանուր խաղաղարար գործերում:

**15. Տարածաշրջանային քաղաքականություն.** *Ինչպիսի՞ն կլինի Ձեր քաղաքականությունը Հարավային Կովկասի և Սեյծովյան տարածաշրջանների հանդեպ:*

Տարածաշրջանային համագործակցությունը մեծ դեր է կատարում քաղաքական կամ տնտեսական կյանքում, ինչը հաշվի է առնվելու հարևանների հետ հարաբերությունում և նրանց նկատմամբ բարեկամական վերաբերմունքում:

**16. Պաշտպանության քաղաքականություն.** *Ինչպե՞ս կկազմակերպեիք երկրի պաշտպանության համակարգը:*

Ներքին գորքերի ձևին, աշխարհա-ռազմավարական շահերից ելնելով:

**17. Անվտանգության քաղաքականություն.** *Որո՞նք Ձեր կարծիքով պետք է լինեն Վրաստանի ազգային անվտանգության հիմնարար սկզբունքները:*

Բարեկամական հարաբերություն բոլոր բարյացակամ երկրների հետ, իսկ առաջին հերթին հարևանների հետ: Պատմականորեն հավատակից ռուսների հետ միասին պետք է վերականգնենք տնտեսական և ռազմավարական ուղիները:

**18. Աբորտ** (հղիության արհեստական ընդհատում). *Անհրաժե՞շտ է արդյոք Ձեր կարծիքով արբորտի արգելումը: Ինչու՞ :*

Աբորտը չարագործություն է: Այն մարդասպանությանը, անուղղելի մեղքին աջակցության ճանապարհ է: Պատշաճ բժշկական հիմնարկությունները պետք է ապահովեն պաշտպանիչ դեղամիջոցների կամ հատուկ միջոցների մատչելիությունը:

**19. Կոմերցիոն վարկեր.** *Արդյո՞ք կոմերցիոն բանկերը պետք է իրավունք ունենան բռնագրավել անշարժ գույքի (բնակարան) սեփականությունը, եթե անձը անկարող է վճարել հարկերը: Ինչու՞ :*

Ոչ, պետք է վերանայվի օրենսդրությունը և կատարելագործվի վարկատուների կողմից «ավագակային» վերաբերմունքը վարկառուների նկատմամբ: Պետությունը պետք է ապահովի խաբված կամ պարտքի տակ ընկած մարդկանց երկարաժամկետ ցածր տոկոսանոց վարկ տալը, իսկ առանց բնակարանի մնացած բնակչությանը՝ մունիցիպալային մակերեսով ապահովումը:

**20. Գյուղատնտեսական հողատարածք.** *Ինչպիսի՞ն է Ձեր մտեցումը Վրաստանում գյուղատնտեսական հողատարածք ձեռք բերելու օտարազգի քաղաքացիների իրավունքի վերաբերյալ:*

Ոչ, և ոչ: Դա արդեն այն գաղտագողի ձևն է, որը երկիրը կբաժանի մաս-մաս: Պետք է երկրում արմատավորվի հանրային պայմանագրերի ձևը, իրատեսական ժամկետի հաշվառումով: